№ 31 ԹԻՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍ 26 — 1895 — ԹԻՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍ 26 № 31

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

«ՁԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 բուրլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 բուրլի։

Արտասահմանից փողի համար պիտի դիմել հետևեալ հասցէով. Черезъ Баку въ Эдзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ԶԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՁԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մին չէ 2 ժամը. բացի կիրակի և տօն օրերից։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մոռացած հարցեր.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ռաշտում տեղի ունեցած ազգային ընդհանուր ժողովի արձանագրութիւնը. Նամակ Էնզէլիից. Նամակ Մարազայից. Նամակ Սպահանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի տեսութիւն. Արտաքին լուրեր. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Յայտարարութիւններ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մոռացած հարցերի մի ցանկ։

ՄՈՌԱՑԻԱԾ ՀԱՐՑԵՐ

III.

Անցեալ համարով (№ 29) մատնանիշ արինք այն տարրական միջոցի, թոշակի սիստեմի վրա, որով կարելի կը լինէր ոչ մշտական եկամուտ կազմակերպել դպրոցների տարեկան ծախսի մի մասը ծածկելու համար։

Շատերի պէս, պահ մի ենթադրենք որ այդ սիստեմը յաջողութիւն չէ կարող գտնել (որ ի հարկէ սխալ է) և տեսնենք թէ ուրիշ ինչ աղբիւրներ կարելի է բանալ, որոնցից կարելի էր գոյացնել դպրոցը պահպանող նիւթական միջոցներ, եթէ ուրիշների պէս չը ուզենայինք յուսահատուել։

Ամենաակներև, ձեռքի տակ եղած միջոցներն են—դիմել Եսայի սրբազանից, Հայկ. դպրոցի հոգաբարձութեան տուած կոնդակներին, որոնք մեծ դիւրութիւն են տալիս կրթական գործի տնտեսականը ապահովելու, առանց նոյն իսկ աշակերտների անտարբեր ծնողներին անհանգիստ անելով։

Այդ կոնդակներից երկուսը մանաւանդ, տալիս են այնպէսի արտօնութիւններ, որոնք վերարտադրել կարող են շատ մոռացած հարցեր և որոնց հէնց մեր այսօրուայ համարում առաջարկում ենք փոխանորդ վարդապետի և հոգաբարձութեան ուշադրութեանը։ Զէ որ երկուսն էլ նրանցից, գիտէին այդ հարցերի գոյութիւնը, գիտէին նաև որ նրանց հանելով մոռացութիւնից, կարելի պիտի լինէր ընդ միշտ ապահովեցնել դպրոցների նիւթական վիճակը։

Ի՞նչ քայլեր են արել նրանք օրինակ, ձեռք բերելու եկեղեցական կալուածների կլանող եկամուտները և կամ նոյն իսկ կորսել սպառնացող կալուածները ապահովեցնելու. ինչ ջանքեր են եղել օրինակ, գտնելու կոնդակի զօրութեամբ դպրոցին պատկանող մուրհակների ահագին գումարները, որոնցից ոչ մէկը կորուած չէ կարելի համարել և աշխատութեան է կարօտ միայն նրանց տրամադրած գումարները կորուստից ազատելու համար։

Այդ բոլորը—եկեղեցական կալուածների ու մուրհակների արտադրութիւնը —չէ որ կարող էր հասնել մի պատկառելի գումարի, որ և կարելի կը լինէր իրը հիմնաքար ծառայեցնել դպրոցների տնտեսական մասին։

Մենք թւում ենք մեր Բանասիրականի բաժնում ահա մի առ մի, թէ հարցերը և թէ մուրհակները և փոխանորդ վարդապետի խորին ուշադրութիւնն ենք հրաւիրում նրանց վրայ։

Հարկաւոր է վերջապէս մոռացութիւնից հանել և լոյս աշխարհ բերել վաղուց ի վեր մոռացած այդ հարցերը...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՈՌԱՑԻԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՄԻ ՑԱՆԿ

Որ դրվում է Թէհրանի հայ հասարակական հրապարակի վրայ և հրաւիրվում նրա վրայ ձեռնհաս իշխանութիւնների ուշքը։

Հարց է տրվում։

1) Եսայի եպիսկոպոսի կոնդակը արտօնութիւն է տալիս Հայկազեան դպրոցի հոգաբարձութեան՝ եկեղեցիների եկամուտից մէկ մաս հանել յօգուտ դպրոցների։ Կոնդակից ի վեր անցել են երկար տարիներ։ Հոգաբարձութիւնը ձեռք առել է եկեղեցիներից այդ բաժինը ստանալու։

2) Նոյն կոնդակով իրաւունք է տրվում, որպէս ամենուրեք, եկեղեցիների մոմավաճառութեան արդիւնքը լիովին յատկացնել դպրոցներին, և այդ մասին մինչև իսկ մի մեծ ծրագիր է տալ, թէ ինչպէս դպրոցի անունով կնիք պիտի չինել, մոմերը կնքել, եկեղեցիներին յանձնել, եկամուտները հաւաքել։ Հոգաբարձութիւնը նեղութիւն կրել է գոնէ այդ խնդիրը կարգադրելու։

3) Էլի նոյն կոնդակով հետևեալ իրաւունքներն է տրվում եկեղեցապատկան կալուածների վերայ «...Տամք ձեզ զլիազօր իրաւունս կառավարելոյ զուիմն կտոր կալուածս պատկանեալս սրբոյն Թադէոսի և Բարդուղիմէոսի եկեղեցւոյն Զահ-Արդուլ-Ազիմ կոչեցեալ թաղին Թէհրանայ և զեկամուտս ի նոցունց հետզհետէ դնել ի Կայսերական զրամատան պարսից ի շահեցողութիւն առ ի կազմել զմայր դրամագլուխ վասն ազգային ապահովութեան Հայկազեան վարժարանին, և եթէ գտցին ի նոսին խարխուլ չէնք և անօգուտ ի նորոգել, զորս բարւոք համալեսցի մեծարու հոգաբարձութեանդ, վաճառել քան թէ պահել. յայնդէպս պարտի դիմել առ մեզ գրաւորապէս և հաւանութեան և հրահանգաց մերոյ հպատակել։» Մի այլ կոնդակով էլ պընդում է իւր նախորդ կոնդակի կալուածների վերաբերութեամբ արած կարգադրութիւնները։ Երկար տարիներ է անցել այդ օրից. ցանկալի էր իմանալ թէ արդեօք ինչ անօրինութիւններ է արել հոգաբարձութիւնը այդ մասին. գանձել է երբէք ո և է մէկ կոպէկ այդ կալուածների եկամուտներից, հետաքրքրուել է իմանալ թէ ուր են կորչում նրանք, ով է կլանում....

4) Էլի նոյն կոնդակով հոգաբարձութեան հետևեալ յանձնարարութիւնն է լինում. «Ընդայսմ կոնդակի յանձնեմ զտասն կտոր (տասն երեք կտոր են) մուրհակս ս. Գէորգ եկեղեցւոյն Ղազվինայ Դարվազի կոչեցեալ թաղին Թէհրանայ, որոց ամենից գումարն 5244 և կէս ղրան (մօտ եօթ հարիւր թուման է) պարսից, ստանալիս ի զանազան անձանց, յորոց ոմանք կենդանի և ոմանք թոշեալ զժառանգս» հոգաբարձութիւնը,—որոյ անդամներից մի քանիս հէնց իրենք մեծ մեծ գումարներ պարտ են—աշխատել է երբ և իցէ իր պարտականութիւնը կատարել, վճարել տալու այդ մուրհակների գումարները, որ այժմ հազարներից անցնում է, և նրանցով կարելի է մի ամբողջ դպրոց պահել...

5) Բացի վերոյիշեալ խնդիրները, հարց է ծագում թէ ինչ վիճակի մէջ է գտնվում այն վիճակախաղը որին բարեհաճել էր հովանաւորել Ն. Վ. Նախարարապետը, որից սպասվում էր աւելի քան 10,000 ղրանի մի եկամուտ, որի փոխարէն էլ առաջուց արդէն հայ հասարակութիւնը մի ուղերձով իր խորին շնորհակալութիւնն ու երախտապարտութիւնն յայտնեց Նորին Վսեմութեան։ Ուր է այդ վիճակախաղը։ Հոգաբարձութիւնն աշխատեց երբէք կազմակերպել և դլուխ բերել այդ խնդիրը։

6) Անցեալ տարի դեռ նախկին հոգաբարձութիւնը չը հրաժարուած, կազմած ունէր արդէն 94—95 ուսումնական տարուայ երկսեռ դպրոցների բիւդճէն և դեռ մի աւելորդ ուսուցիչ էլ վարձելու համար, 200 ղրան միայն պակասութիւն էր զգում։ Ասել է թէ ամեն բան պատրաստ էր տղայոց և օրիորդաց դպրոցների համար, սակայն հոգաբարձութիւնը, հրաժարուելուց յետոյ, օրիորդաց դպրոցը չը բացուեց և ոչ էլ աղբիւր կար տղայոց դպրոցի ուսուցիչներին վճարելու համար. պարտքեր իսկ երևան ելան։ Ինչ եղաւ ուրեմն կազմած բիւտճէի գումարը։ Հոգաբարձութիւնը երբէք վերահասու եղաւ քննելու այդ խնդիրը։

7) Գրիգորիս եպիսկոպոսը երբ թեմազուրկ եղաւ, Թէհրանից անցնելիս, աշխատեց և հրովարտակով աէրութիւնից դուրս բերեց 2500 ղրան տարեկան ռոճիկի յաւելում. 1000 ղրանը Թէհրանի Հայկազեան վարժարանի և 1500-ը Ջուղայի վարժարանի համար, որից յետոյ նրա յաջորդ Խաչատուր վարդապետը, առանձին հրովարտակով հաստատեց իրեն իրը սեպհականութիւն. սորա մահուանից յետոյ, պատեր Պասկալը առանձին հրովարտակով հաստատել տուաւ այդ գումարը իր և Եսայի եպիսկոպոսի վրայ։ Որովհետև ինքնուրոյն մի ոտաձգութիւն էր նրա արածը, Եսայի եպիսկոպոսը ընդիմադրեց և դեռ մինչև այսօր էլ առկախ է մնում այդ հարցը։ Հոգաբարձութիւնը միջոցներ ձեռք առաւ այդ խնդիրը լուծելու և տիրանալու իր՝ վարժարանին վերաբերեալ տարեկան ռոճկի յաւելումը։

8) Հանգուցեալ Միր Խաթունը կտակել էր ս. Թադէոս եկեղեցուն իր տունը. դրա վաւերացուած դաբալէքը մնում էր նրա կտակատար Մակինցովի մօտ, որից ստացել էր Մովսէս Աւետիսեանը և տալ Ղուկաս Բարսեղեանցին, որպէս զի սա էլ տանէ և յանձնէ եկեղեցւոյն. այդ օրւանից այդ տան դաբալէքը մէջ տեղ չեն երևում։ Հոգաբարձութիւնը, կամ աւելի լաւ ևս ասած, հասարակութիւնը հետաքրքրուել է այդ հարցով. պահանջել է Ղուկաս Բարսեղեանից տան դաբալաները։

Ահա, վերոյիշեալ լուրջ հարցերն են, որ նետում ենք հրապարակ, հանելով նրանց մոռացութիւնից. մի մոռացութիւն, որից անշուշտ օգտվում են շատ պարազիտներ։ Ինչով է ուրեմն զրաղուել Հայկազեան դպրոցի հոգաբարձութիւնը, եթէ այդ հարցերից ոչ մէկի մա-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌԱՇՏՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱԶԳԱՅԻՆ-ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Որ կայացաւ 15 օգոս. 1895-ին

Ժողովուրդը կամենալով վերականգնել իրհանգստութիւնը և անդորրութիւնը, օգոստոս 15-ին կազմելով ընդհանուր ժողով, կայացրեց հետևեալ վճիռները խնդրութեան գլխաւոր պատճառ եղող անձի համար, որին գտնում է ժողովը, ուսուցիչ Սողոմոնեանի անձնաւորութեան մէջ։

Ժողովը, գրաւոր խնդրի, 35 անձանց ստորագրութեան հիման վերայ, հրաւիրեց տեղոյս քահանան և կայացրեց իր վճիռները։

1) Միրզա Բաբա և Սմբ. Ներսեսեան։ Յայտնում են, որ ուսուցիչը, «Մշակ» լրագրի № 79-ում տպուած կանանց բողոքի մէջ, իրեն արդարացնելու գործում, իրենց կանանց ստորագրութիւնները կեղծել է։

Նոյնք։—Ուսուցչի արտաքոյ կարգի պահանջների առթիւ, իրենց որդոց ձեռքով գողութիւններ են պատահում տանը։

Նոյնք։—Ուսուցիչը, փոխանակ լոկ իր պաշտօնով զբաղելու, շահասիրական մոլի զգացումից դրդուած, զանազան առևտրական ձեռնարկութիւններ է անում դպրոցի անունով և իրեն յատկացնում օգուտը։

Պ. Ա. Տէր Յակոբեան։—Ուսուցիչը աշակերտներին և աշակերտուհիներին ծառայեցնում է իբրև միջոց իր նիւթական շահերի։

Բէկլարբէկուց ստացել է 10 ոսկի

Տէր Օհանեանից 5 թուման

Հիւսլատոսից՝ սառնասիրտ ընդունելութիւն։

Տէր Ղևոնդ։ Աչքի առաջ ունենալով ներկայ լուսաւորութիւնը, տեղոյս ապագայ սերնդի կրթութեան համար հարկաւոր է ունենալ աւելի բարոյական, ուղղամտական և վերջապէս ցէնզ ունեցող դաստիարակիչներ, մինչ երևում է մի քանի անձերի յայտնած կարծիքներից, որոնք ընթերակայ են եղել քննութեանը, որ Սողոմոնեանը ոչ ընդունակութիւն ունի ուսուցչութեան, և ոչ ուսում՝ դաստիարակութեան. մատնացոյց էին անում, մանաւանդ նրա ստացած ուռճիկի որքանութիւնը։

Պ. Ա. Տէր Յակոբեան։ Ըստ պայմանի, ուսուցչուհին պէտք է լինէր օր. Հեղինէ Սողոմոնեանը և ոչ տիկին Սարգսեանը։

Պ. Ոսկան Ոսկանեանն։ Ուսուցչի պայմանը լուծվում է այն կէտում, որ նա իր պաշտօնում բաւականութիւն չէ տուել ժողովրդին։

Պ. Սահակ Մ. Յովսէփեան։ Երկու ամիս առաջ, երբ դեռ ժողովրդի մէջ ոչ մի խօսակցութիւն չկար, ինչու համար հոգաբարձութիւնը, նիստ կայացրեց և վճռեց արձակել ուսուցչին. իսկ այժմ նրանցից 3-ը պաշտպան են հանդիսանում։

Ժողովուրդը յոտնկայս, միաձայն վճռեց, որ ուսուցիչը խառնակութեան պատճառ լինելով ժողովրդի մէջ, պէտք է դիմել հոգաբարձութեան որ նա անպատճառ մինչև օգոստոս 20-ին կամ հեռացնի այդ ուսուցչին և իւր քրօջը, կամ ինքը հեռանալ, թողնելով որ գործը վերջացնի ինքը ժողովուրդը։

(Ստորագրութիւն 35 անձանց)

ՆԱՄԱԿ ԷՆԶԷԼԻԻՑ

—

5 օգոս. 95.

Անցեալ ամսի 27-ին Եղբարք Թումանեանց գրասենեակում, նրանց ներկայացուցիչ պ. Աւագ Մելիք Ալլահվերդեանցի յատուկ առաջարկութեամբ, ազգային ժողով գումարուեց, ուր պիտի քննուէր ազգային մի քանի գործեր և մի ելք մտածէր Էնզէլիում ուսումնարան բաց անելու համար։

Ռաշտի Տէր Ղևոնդ քահանան նախագահում էր ժողովին։ Մի մասնաւոր հաշուատեսութիւնից յետոյ. իմացուեց որ եկեղեցին դրամագլուխ ունի 2800 ղուռն, զանազան անձանց մօտ տոկոսով։ Դրանից յետոյ երէցփոխ պ. Փիլիպոս Գիլտնեանցը վերահաստատուեց վեց ամսով ևս։

Այս բոլորից յետոյ, հոգաբարձական ընտրութիւն եղաւ և դաղտնի քուէարկութեամբ ընտրուեցին. պարոնայք, Տէր Ստեփանեանց, Մելիք Ալլահվերդեանց, Ն. Ներսէսեանց, Մ. Բաբայեանց և Մ. Պարոնեանց. որոնց խնդրեցին ներկայ եղողները՝ աշխատել այս տարի սեպտեմբեր ամսում մի ուսուցչ հրաւիրել, երեխայոց ուսում տալ և չը թողնել որ նրանք փողոցներում թափառեն։ Այդ մասին հանգանակութիւն էլ եղաւ և բոլոր ներկայ եղողները գրուեցին մօտ 1500 ղուռն և իսկոյն փողը կանխիկ վճարեցին։

Երկրորդ ժողովը եղաւ յուլիսի 31-ին, ուր պիտի վճռվէր ուսումնարանի գոյութեան հարցը։ Նախ յիշենք որ հանգուցեալ Ստեփան Մարտինիչ Լիանոզովը իւր կենդանութեան ժամանակ խոստացել էր տեղոյս եկեղեցու բագում իւր հաշուով մի ուսումնարան կառուցանել, բայց դժբաղտաբար վաղահաս մահը չթողեց նրան իր խղճը կատարելու։ Որպէս լսում ենք, նորա որդի Գիորգի Ստեփանիչ Լիանոզովն ասել է որ իւր հօր խօսքը կիրագործի։ Էնզէլիցիները անհամբեր սպասում են այդ բաղդաւոր օրը տեսնելու և յոյս ունեն։

Ժողովը վճռեց նամակ գրել յիշեալ պարոնին և խնդրել ուսումնարանի շինութեանը որքան կարելի է շուտ ձեռնարկել։ Իսկ այս տարուայ համար ժողովը վճռեց մի տուն վարձել և սեպտեմբերի համար մի ուսուցիչ հրաւիրել մինչև ուսումնարանի կառուցումը, որի գոյութեան համար ցուցակ կազմեցին և նամակով դիմեցին զանազան յայտնի բարերար անձերի՝ դրամական օգնութիւն խնդրելու։ Ցոյս ունինք որ գործը յաջող կը գնայ. դա ցոյց կտայ հոգաբարձուների գործունէութեան այժը։ Ցանկանալով յաջողութիւն, մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում Եղբարք Թումանեանց տան ներկայացուցիչին, նրա եռանդուն գործունէութեան համար, որ ձեռնարկեց այդպիսի մի ազնիւ քայլի և զարթնացրեց ուսման կարևորութիւնը էնզէլեցւոց մէջ։ Իսկ է որ Թումանեանք ամէն տեղ հայերի երեսը պարզացնում են։

Թալիզ.

ՆԱՄԱԿ ՄԱՐԱՂԱՅԻՑ

—

4 օգոս. 95.

Վաղուց է որ այստեղ քահանայական հարցի համար, ներքին խռովութիւն կայ։

Տեղային քահանան միանալով մի քանի իրեն նման տգէտների, որոնց գլխաւորն է ուստա Պետրոսը, որոգայթներ են սարքում Տէր Տաճատ քահանայի դէմ։

Օգոստոս 3-ին տեղի ունեցաւ ընդհանուր ժողով. վերոգրեալ հակառակորդները ձայն բարձրացրին թէ «մենք նախ բաւականանում ենք մի քահանայով, իսկ եթէ մօտակայ գիւղերը մեծ պահանջ ունեն քահանայի, այն ժամանակ մենք մեր միջից մեզ համար քահանայացու կընտրենք». երևակայեցէք թէ ինչպէս քահանայացու պիտի ընտրեն իրենց միջից։ Բանը այն է, որ նրանց ձայնին հաւանութիւն էր տալիս մեր պարոն հոգաբարձուներից մէկն էլ թէ Տէր Տաճատը խառնակիչ մարդ է, քանի որ նա եկել է, ժողովուրդը խռովութեան մէջ է» ինչպէս երևում է այդ պարոնը շողոքորթութիւն սիրող մարդ սին չէ մտածել և չէ աշխատել։ Ինչով են զբաղած նրանք և փոխանորդ վարդապետը, քանի որ այդքան դումարներ կլանվում են և դպրոցը մի 10 թուման փողի կարօտ է մնացել այժմ և անօթութիւնից մեռնող պնձի նման է քարշ տալիս իր գոյութիւնը։

Պարզ է. հարցերի դրութիւնը ցոյց է տալիս, որ հոգաբարձութիւնը և ոչ իսկ հետաքրքրվել է նրանցով և զբաղվել է միմիայն իր ապիկարութիւնը արդարացնել, ամբաստանել զանազան ուսուցիչների և այլն...

Ցարենք այժմ մի առ մի բոլոր այն անձերի անունները, որոնք մուրհակով պարտական են դպրոցին բաւական կլորիկ գումարներ, նոյն իսկ պարզ և շատ չնչին տոկոսներով հաշուած։

ՄՈՒՐՀԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

1859 թիւ մայիս 24-ից, Թադէոս Ա. Պահլաւունին պարտ է մուրհակով, վաւերացմամբ Թադէոս եպիսկոպոսի, ս. Դէորգ եկեղեցւոյն, Օհան Մովսէսեանի, նրա մօրը և Թադոսի ամուսին Մէրի Խանումի տեղագին։—500 ղուռն։

1863 նոյեմբեր 25-ից, Զաքարիա Սիմէոնեանը ստացել է տէր Յովհաննէս Մարկոսեանից և պարտ է ս. Թադէոս եկեղեցւոյն չորս ամիս պայմանաժամով, 24 տոկոսով.—62 ղուռն 8 շահի. տոկոսով 537 ղուռն 18 շահի։

1864 յունվար 20-ից. Աւետիք Տէր-Ստեփանոսեանց պարտ է ս. Դէորգ եկեղեցւոյն. 4 ամիս ժամանակով 18 տոկոսով—62 ղ. 8 շ. տոկոսով 547 18 շահի։

1867 հոկտեմբեր 1-ից. Եղիա Մահտեսի Պետրոսեանը (որդիները, նոյն իսկ և ինքը լաւ հարուստ են. մեծ որդին Ըրշակ Մահտեսի Պետրոսեանը նոյն իսկ այժմեան հոգաբարձութեան անդամ է) ստացել է Խաչատուր Ա. Անտոնեանից, պարտ է ս. Դէորդ եկեղեցւոյն 1 տարի ժամանակով, 18 տոկոսով.—1560 ղուռն, տոկոսով 9399 ղուռն։

1868 օգոստոս 7-ից. Ղազար Օհան Յարութիւնեան ստացել է Ալէքսան Սարգսեանից և պարտ է ս. Դէորդ եկեղեցւոյն 2 ամիս պայմանաժամով. 24 տոկոսով.—40 ղուռն. տոկոսով 299 ղուռն 12 շահի։

1869 յունվար 2-ից, Շահնազար (դուցէ Նիկողոսեան, անընթեռնելի էր ձեռագիրը) պարտ է ս. Դէորդ եկեղեցւոյն վկայութեամբ Տէր-Սրապեանի, Կոստանդ Ծատրեանի և Ղազար Յովհաննիսեանի, հանդերձ Ռուստամ վերատառեալ պարսկ. կնքով, վեց ամիս պայմանաժամ 24 տոկոսով.—106 ղ. 10 շ. տոկոսով 787 ղուռն։

1869 ապրիլ 28-ից. Նանախանում Թորբախանեան (թոռը՝ Թադէոսխան Խ. Ա. Անտոնեան, շատ հարուստ է և արդէն իսկ վայելում է իր մեծ մօրից ժառանգութիւնից սրված տարեկան թոշակը) ստացել է Ալէքսան Սարգսեանից և վկայութեամբ Ղազար Յովհաննիսեանի պարտ է ս. Դէորդ եկեղեցւոյն չորս ամիս ժամանակով 24 տոկոսով 100 ղ. տոկոսով 732 ղուռն։

1869 նոյեմբեր 20-ից, Կարապետ Եղեայեան վկայութեամբ տէր Սրապիոն Մելիք Եսայեանի պարտ է ս. Դէորդ եկեղեցւոյն վեց ամիս ժամանակով 24 տոկոսով.—160 ղուռն, տոկոսով 1148 ղուռն 16 շահի։

1872 մարտ 12-ից Կնեազ Միրզա Յովսէփխան Մելիքեանց Սամսէթսկի (!!) (որդին Թովմաս-խանը հարուստ է և նոյն իսկ անդամ հոգաբարձութեան) իր կնքած և ստորագրած մուրհակով, վաւերացած ազգ. կառավարութեան ատենապետից (որ նոյն իսկ ինքն էր) և ազգ. դիւանատան ատենապետ Մ. Ա. Մարգարեանից, ի երեսփոխանութեան Ալէքսան Սարգսեանի պարտ է վեց ամիս ժամանակով (ըստ օրինաց 12 տոկոսով պէտք է հաշուել)—1288 ղ. տոկոսով 4913 ղ. 15 շահի։

1872 ապրիլ 1-ից Միքայէլ Անջէլով յեվսփոխանութեան Ալէքսան Սարգսեանի. պարտք է ս. Դ. եկեղեցւոյ ազգ. անդուկին վեց ամիս պայմանաժամով (ըստ օրինաց 12 տոկոսով պէտք է հաշուել)—1300 ղ, տոկոսով 4953 ղուռն։

1872 ապրիլ 24-ից Համբարձում Յովսէփեանը, վկայութեամբ Ալէքսան Սարգսեանի և Ա. Ա. Դասպարեանի պարտք է վեց ամիս պայմանով (12 տոկոսով)—110 ղուռն տոկոսով 418 ղուռն։

1878 մայիս 21-ից Յորդանան Գալստեան, վկայութեամբ Պետրոս Մ. Յովհաննիսեանի, տէր Պողոս Գրիգորեանի, Միքայէլ Յովսէփեանի, Յովհաննէս Տէր-Սարգսեանի, Կարապետ Նաղարեանց Կարապետեանի, պարտ է ս. Թադէոս եկեղեցւոյն 1 տարի պայմանաժամով չորս անգամով վճարելի (12 տոկոս ըստ օրինաց) պարտք 400 ղ. տոկոսով 1228 ղուռն։

1891 ապրիլ 27-ից Մկրտիչ Բժշկեանը (ինքն դեռ կենդանի է) ս. Գէորգ եկեղեցւոյ էլ և մտից հաշուից, վկայութեամբ Եսայի եպիսկոպոսի, պարտ է վճարել 1 տարի պայմաժամից զկնի, առանց պատճառի—360 ղ. տոկոսով 547 ղ. 4 շահի։

Գումար 6060 ղուռն 18 շահի։

Պարզ քրկոսով անում 25999 ղուռն 3 շահի։

—

Այս բոլոր մուրհակները գտնվում են փոխանորդ վարդապետի ձեռքը և եթէ հայը սուրբը ճակատ ունենայ և չը շարունակի «հաճելի լինելու» ցանկութեամբ ազգ. հաստատութիւնները մուրացիկ դրութեան մէջ պահել, կարող է գոյացնել մօտ 2500 թուման գումար, որից եթէ 500-ը կորսուի մնացած 2000-իտոկոսն իսկ բաւական կլինէր—թոշակների, եկեղեցւոյ և կալուածների եկամուտների հետ գումարելով—ապահովել ընդ միշտ՝ դպրոցների անտեսական դրութիւնը։

Մեր ասելիքը առ այժմ վերջացրինք. կը սպասենք որ մեր դրած հարցերը լուծում ստանան. իսկ այն հոգաբարձուներին, որոնք խօսում են թէ ոչ մի գործնական միջոց չենք ցոյց տալիս, հրաւիրում ենք դուրս գալ ասպարիզից, եթէ ընդունակ չեն այսպիսի ակներև գործնական միջոցներով իսկ ապահովեցնել դպրոցը։

Ղ. Ֆ.

էւ, Տէր Տաճատը ամեն մի սխալ քայլում զգուշացնում է նրան: Երբ մի քանի երիտասարդներ բացատրութիւն են հարցնում Տէր Տաճատի խառվարարութեան մասին, հոգաբարձուն բացատրում է թէ նրա տնօրինութեամբ է կ[...]ցել, որ ուսուցիչ Յովնան վարժապետը դասարանի առաջ ծեծի ենթարկվել և այդ պատճառով ուսումնարանն էլ փակվել է: Բայց Յովնանը իւր անբարոյականութեան համար ծեծուեց և այդ ժամանակ էլ Տէր Տաճատը Մարաղայում էր: Ժողովրդի միւս մասը, որ մեծամասնութիւնն էր կազմում, հեռագրաւ խնդրում են Ատրպատականի առաջնորդից որ Տէր Տաճատին իրանց ծխական քահանայ կարգէ:

Այդպէս մի ուսումնական քահանայ հեռացնել Մարաղայից, կը նշանակի շատ բան կորցնել: Մենք խնդրում ենք առաջնորդական փոխանորդից որ չ'զրկէ խեղճ ժողովրդին մի բարի ուսումնական քահանայից, որին շատ պարտաւորութիւն ունին: Նա էր որ մի քանի ժամանակ սրանից առաջ, հազիւ կարողացաւ իւր անձեալ գրութիւնից ազատել այստեղի ընթերցարանը. և կամենում էր բարեկարգել ուսումնարանը, որը քանի տարի տարւայ ընթացքում ոչինչ արդիւնք չէր ունեցել: Ինչպէս երևում է, ուսումնարանի և ընթերցարանի հոգաբարձութիւնը յանձնելու է շատով երիտասարդութեան, յուսով ենք որ վերջիններն իրենց գործունէութեամբ կը գոհացնեն ժողովրդին:

Պանդուխտ.

ՆԱՄԱԿ ՍՊԱՀԱՆԻՑ

—

Եթէ Ջուղայի հասարակութիւնն ուզում է [...]յց տալ տարրական ազգայնոց որ թօթափել է իւր վրայից հնութեան փոշին և մտել արդէն քաղաքակրթութեան ընդհանուր [...]ղի մէջ, թող չը բաւականանայ ծափահարութիւններով միայն. թող չը կարծէ [...] տարին մի անգամ ներկայ գտնուելով ազգային հանդէսներում և այնտեղ լոկ ծափահարութեան համար, ներհապետական օրհնութեամբ յիշելով հիմնադիրների և բարերարների անունները, արդէն կատարած է համարում իւր պարտականութիւնները. այլ [...]պէտք ցոյց տուած լինի թէ ինքը կատարել գիտակցութիւն ունի կրթութեան գործի վերաբերութեամբ և հասկանում է նրա ամակողմանի օգուտները, պէտք է որ մի քիչ աւելի համակրութեամբ վերաբերւի դէպ'ի կրթական գործը. և եթէ ուզում է ունենալ շա[...]ուգ կրթուած զաւակներ, ժամանակն է որ բա[...]իկը խնամքով պահած քսակը, և չը բաւականանայ դպրոցների՝ արդէն կառավարիչներից ու[...]արկածը և Կովկասից հրաւիրէ մի բարձ[...]ագոյն վկայեալ— բարեկիրթ վարժա[...]տ ու վարժուհի, որոնց համար հարկաւոր [...]լինի ծախսել տարեկան միայն 7—8 հազիւր [...]ուման. իսկ եթէ դարձեալ կը զլանայ ջու[...]յեցին այդ գումարն տալ, (չնայելով որ շատ [...] բան չէ 5—6 հազիւր թումանից բաղկացած [...] բազմամարդ ժողովրդի համար որոյ մեծամասնութիւն եւ ունեւոր է) և հաւատով [...]նկալէ որմինչ—ուրիշներն հոգան այդ [...]ական պէտքերը-զլանով միայն ցոյց տուած կը լինի իւր յետադէմ վիճակի մէջ լինելը: Հարկաւոր է որ Ջուղայի հասարակութիւն մի քիչ անտեսապէս մտածէ հոգաբարձուների համար որ Հնդկաստանի ազգային հաստատութեանց կողմից եկող համեստ գումարներն բնաւ չեն կարող բաւականութիւն տալ այդպիսի պահանջմանց: Ըստ այլ որբարդանն կա՛ ի հարկէ միշտ պատեհութիւն չէ կարող ունենալ խումբ խումբ քահանայք ձեռնադրելու և ձեռք բերած հասոյթն մեր վարժարաններին տալու (ինչու, ինչ է անելու հայը ստացածները). ուստի ցանկալի կը լինէր որ որբարդանի բացակայութեան ժամանակ, վարժարանների հոգաբարձութիւնը իրազեկ լինելով այն իրողութեան՝ թէ որբարդան հեռու, Դանդէսի ափերից, սրատես աչօք նայում է տեսնել իրենց գործունէութիւն կամ անգործունէութիւն: Իսկ հասարակութեան մէջ էլ կան այնպիսիք որ ուշի ուշով դիտում և հետաքրքրութեամբ սպասում են իրենց գործունէութեան արդիւնքն տեսնել, որով պարտաւոր է ամեն ջանք ի գործ դնել տարածելու կրթութեան սէրը հասարակութեան մէջ և զգացնել տալ կրթական գործին բարոյապէս և նիւթապէս օգնելու պէտքը. պարտաւոր է հասկացնել նրան համերաշխութեամբ գործելու բազմազիմի օգուտները, և ապա ձեռնարկել հիմնաւոր կերպով տարբեր անելու գործին. տարակոյս չունենք որ հասկացող դասակարգն՝ պատկանող բազմաթիւ անձինք գիտակցաբար յանուն Ջուղայում երկսեռ մատաղահասուհի կրթութեան՝ կը տան որոշեալ մի գումար իւրաքանչիւրն ըստ կարեաց: Իսկ եթէ հոգաբարձութիւն անկարող է կարծում իրեն այդ նիւթական պարտականութիւն կատարելու, խորհուրդ կտայինք նրան հեռանալ ասպարէզից և գործն յանձնել իրենից աւելի կարող և ձեռնհաս անձնաւորութեանց, որոնք անշուշտ աւելի եռանդով կ'գործէին կրթութեան տաճարի դիրքն ու նշանակութիւն բարձրացնելու համար:

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Տպագրելով այս համարում «Մոռացուած հարցերի» ցանկը, յոյս ունենք որ փոխանորդ վարդապետը կը սկսի բանալ մի լուրջ քննութիւն, կաշխատի դուրս բերել կլանուած փողերը և ուշադրութիւն չը դարձնելով պարտապանների զանազան փախուստի առարկութիւններին, հարկ եղած ժամանակն կը գործադրի իւր քաղաքական իշխանութիւնը: Բաւական է ինչ մեր դպրոցները քարշ եկան և այժմ նիւթական չքաւորութիւնից փակւելու դրութեան են հասել, մինչ նրա դրամները գտնվում են սրա—նրա մօտը:

—

Թէհրանից ոչ շատ հեռու Քէհրիզակ գիւղի մօտ շինուող շաքարի գործարանը, որ պատկանում է Բելժիքացիներից և պարսիկներից կազմւած ակցիօներական մի ընկերութեան—շատ յաջողութեամբ կատարելուց յետոյ ճակնդեղի մշակման փորձը, շուտով էլ կը վերջացնի հարկ եղած պատրաստութիւնները և հաւանական է որ մի տարուց յետոյ Պարսկաստանին կը մատակարարէ տեղական շաքար:

—

Հայկազեան դպրոցի հոգաբարձութիւնը խնդրել էր պ. Վ. Փափազեանից հեռագրել Թիֆլիս և հրաւիրել մի վարժուհի: Պ. Վ. Փափազեանը իր՝ «Մուրճի» խմբագրութեան և պ. Դ. Աղայեանցին ուղղած հեռագրերի պատասխանը ստացել է որ «վարժուհի չէ գտնվում»: Ուրեմն օրիորդաց դպրոցը այս տարի էլ փակ է մնալու: Ինչու հոգաբարձութիւնը վաղօրօք չէր դիմել վարժուհու համար և միայն օգոստոս 19-ին է դիմել այդ մասին հոգալու: Այս և այլ շատ «ինչուների» մենք կը պատասխանենք շատով: Մեր ասածները ճշտւեցին. այն է թէ նոր ընտրւած հոգաբարձութեան մեծ մասը նմանում են այն խուլերին, որոնց հրաւիրւած էր երաժշտութեան մասին դատողութիւն տալու:

—

Ընթերցողների ուշադրութիւնն ենք հրաւիրում այս համարում տպւած Ռաշտումը կայացած ազգային ժողովի արձանագրութեան վրայ: Այդ ժողովը մի անգամ ևս պնդում է և դեռ փաստեր էլ աւելացնում այն խնդրի մասին, ինչ «Շաւիղը», յարուցել էր: Այդպիսով «Շաւիղի» ասածները միանգամայն հաստատվում են և զանազան անտեղի Տէր-Օհանեանցները մի անգամ ընդ միշտ խայտառակ լինում, որ յանդգնում են պաշտպան հանդիսանալ Ռաշտի ուսուցչի պէս ապիկարների: Ուրախ ենք, որ Ռաշտի ժողովուրդը սկսեց հասկանալ մեզ և իր օգուտը: Յոյս ունենք որ շուտով դպրոցը կը բարեկարգւի և կունենայ աւելի արժանաւոր դաստիարակիչներ ու միանգամայն ազատ կը լինի զանազան կեղտոտ աղտերի թիւնաւոր ազդեցութիւնից:

—

Ինչու համար է որ Դարվազա-Ղազվինի գրադարանի (Ընթերց. ընկ.) գանձապահը չէ կամենում հաշիւ տալ: Ստիպւած ենք կարծել որ նա կերել է այդ գրադարանի փողն ու գոյքերը: Մաքուր մարդը, այսքան խիստ հրաւէրներից յետոյ՝ ասպարէզ կը գար: Պ. Գանձապահը ապացուցանում է դրանով, որ մաքրութեան ինչ լինելը չը գիտէ:

—

Ստացանք Դավրէժի «Ընթերցասիրաց գրադարանական ընկերութեան» կանոնադրը: Ընկերութիւնը հիմնւած է Արամեան դպրոցի աւարտած աշակերտներից և նպատակն է գրադարաններ բանալ Ատրպատականում. մի հատը արդէն ունի Բերդաթաղում: Ինչպէս մի անգամ ևս ասել ենք, այժմ էլ կրկնում ենք, որ լաւ կը լինէր եթէ Դավրէժի այդ զանազան մանր ընկերութիւնները, օրինակ Սէր, Դպրոցասիրաց և Ընթերցասիրաց ընկերութիւնները միանային, —նպատակները քանի որ շատ հեռու չէ միմեանցից—և միահամուռ ույժերով գործէին: Այս է մեր խորհուրդը: Այսպիսի մի միացմամբ միայն նրանք կարող պիտի լինէին մի ակներև արդիւնք ցոյց տալ:

—

Թէհրանի Դարվազա-Ղազվինի նախկին քահանայ տէր Մաշտոցը, որ հռչակաւոր էր եղել իր անբարոյական ընթացքով և դրա համար իսկ զրկւել է քահանագործութիւնից, դիմել է բողոքականութեան, և այնտեղից մերժւելուց յետոյ, ընդունել է կաթոլիկութիւն: Պօլսոյ Ազարիա պատրիարքից յանձնաւարւած լինելով, տէր Մաշտոցը ստացաւ ճանապարհածախս կաթոլիկներից և սրանից մի քանի օր առաջ մեկնեց դէպի Սպահան, կաթոլիկների գերապայծառի մօտ: Փաստը այն է որ կաթոլիկութիւնը դեռ շարունակում է իր ծոցը բանալ տէր Մաշտոցի պէս՝ անբարոյականութեան և գծուծութեան համար մի հասարակութիւնից վռնդւած՝ անձնաւորութեան: Միթէ Սպահանի մեր կաթոլիկ եղբայրները կը հանդուրժեն իրենց մէջ ընդունել այնպիսի մի անձի: Լսվում է որ Թէհրանից մի քանի հայ ընտանիքներ քաջալերել են տէր Մաշտոցի արարքը, խոստանալով իրենք էլ հետևել նրան: Անշուշտ տէր Մաշտոցի տեսակ անձեր պիտի լինեն այդ հայերը, ուստի և բացատրվում է նրանց ընթացքն էլ:

—

Սովեալների նուիրատուների ցանկը: Կարապետ Յովհաննիսեան 5 ղան, Յով. Պօղոսեան 3 ղ., Մանուկ Խաչիկ Մանուկեան 20 ղ., Ներսէս Յով. Մոսէսեան 5 ղ., Գէորգ Յ. Աբրահամեանց 10 ղ., Բ. Ստամեանեան 10 ղ., Բ. Աւագեան 100 ղ., Յովսէփ Թաղէոսեան 10 ղ. Սիսակ 5 ղ., Կ. Պօղոսեան 10 ղ., Արշակխան Գօրոյեան 30 ղ., Բաբաջան Մկրտիչեան 15 ղ., Մ. Կ. Եղեազարեան 20 ղ., Յովհաննէս Եղեազարեան 50 ղ., Յորդանան Կ.Ստեփանեան 10 ղ., Խաչատուր Թադէոսեան 10 ղ., Վ. Փափազեան 10 ղ., Ա. Բէկնազարեան 10 ղ., Իշխան Վահրամ Տատեան 500 ղ., Իշխանուհի Վ., Տատեան 550 ղ., Միհրան Մ. Գրիգորեան 50 ղ., Ղուկաս Վարդանեան 50 ղ., Անտոն Պետրոսեան 10 ղ., Ռստամ Ղազարեան 10 ղ., Գէորգ Յոնանեան 20 ղ., Ղուկաս Յովսեփեան 250 ղ., Իսկանդար Վարդանեան 100 ղ., Յովհաննէս Խ. Մասէհեան 100 ղ., Տ. Իսահակ Տ. Աբրահամեան 20 ղ., Եղբարք Հայրապետեան 50 ղ., Ալէքսան Վարդանեան 20 ղան:

(Կը շարունակուի)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

…«Բայց ախ, մի քանի րոպէի համար,
Անցրած՝ մութ ու ոլոր ժայռերի մէջը,
Ուր երբ մանուկ՝ խաղում էի ես—
Յաւէրժութիւն, դրախտն անգամ կը
փոխանակէի»…

Ահա այն վերջին խօսքերը, որոնք ուրս են թռնում միայնութեան մէջ տառապած աբեղայի սրտի խորքերից: Լերմոնտով ռուս բանաստեղծի «Մցիրի» պօեմայի մասին է խօսքս, որի թարգմանութիւնը տեւել է «Մուրճը» իր № № 5 և 6 համարներում: Մանկութիւնից, մի պատերազմի ժամանակ, խլւած իր հայրենի հողից, լեռնցի պատանին յանձնվում է մի մենակեացի մի վանքում, ուր և նա մեծանում է փակւած չորս պատերի մէջ: Բայց իր մանկական յիշողութիւնները, հայրենի հողի կարօտը և երիտասարդական բուռն

զգացումները միացած՝ դուրս են կորզում մի օր Թշւառ Մցիրիին վանքի պատերից… Նա գնում է անտառների միջով, տեսնում է ազատ օդն ու արևը, շքեղ բնութիւնն ու վայրենի փոթորիկը, սիրուն աղջիկն ու իր հայրենի լեռները և այդ լեռների գաւակ յովազը…. ապա, երբ հագիւ ճաշակում է այդ բոլոր քաղցրութիւնները,

«Եւ հագիւ ազատ կեանքի քաղցրութեան ճաշակն առած՝
Ինձ հետ յաւիտեան, տանեմ գերեզման

Թախիծը—իմ սուրբ հայրենեաց համար:

«Մցիրին» Լերմոնտովի գլխաւոր գործերից մէկն է. «Դև»-ի և «Իզմայիլ բէգի» հետ կազմում են նրա գլուխ գործոցը: «Դև»-ի հայերէն թարգմանութիւնը վաղուց է որ տրւած է մեզ Մ. Սադաթեանի թարգմանութեամբ և մեր թարգմանական գրականութեան մէջ առաջին տեղն է գրավում: Ահա ունեցանք «Մցիրի»ի թարգմանութիւնն էլ: Այդ գործի ներկայ թարգմանութիւնը, չընայելով որ բաւական հաւատարիմ է, շատ դժւար է կարդացվում և զուրկ է ներդաշնակութիւնից: Կարդալով «Դև»ի բնագիրը և հայերէնը, նոյն շքեղ ներդաշնակութիւնն է գտնում թարգմանութեան մէջն էլ. մինչ այդպէս չէ Մցիրիի վերաբերութեամբ: Բայց ինչ որ էլ լինէր, երբ առաջին փորձ՝ վատ չէ. սակայն հարկաւոր է ունենալ այդ գործի մի նոր—աւելի յաջող թարգմանութիւնը. հարկաւոր է որ թարգմանիչը լաւ թափանցէ գրւածքի ոգու մէջ և ինքն էլ լինի բանաստեղծ: Անյաջող կտորներ կարող էինք բաւական ցոյց տալ, բայց մեզ հեռու կը տանէր և տեղ շատ կը բռնէր: Ընթերցողը կարող է մի գաղափար ունենալ այդ մասին՝ համեմատելով յօդւածիս վերևում տրւած չորս տողը (որ թարգմանել եմ ռուսէրէն բնագրից), «Մուրճի» թարգմանչի թարգմանած կտորի հետ:

Ի հարկէ դեռ չեմ յիշում շատ սխալ թարգմանած կտորներ, որոնք ոչ թէ փոխում են միտքը, այլ նրանց խստութիւնն ու նրբութիւնը մեղմացնում են և անհամացնում:

*** Միւս ուշադրութեան արժանի յօդւածներ «Մուրճի» № 6-ում, ներկայանում են Լևոն Մանուէլեանցի, դպրոցական նամակների X և XI-ը, որոնցից առաջինի մէջ նկարւած է գրաբարի և աշխարաբարի կռիւը, իսկ երկրորդում արծարծւած է թւանշանների գործածութեան հարցը՝ դպրոցներում: Շատ սիրուն նկարագրած է թւանշան մուրացող աշակերտների, թւանշանով մեծութիւն ծախող վարժապետների և մանաւանդ սխոլաստիկ տեսուչ—դրագոնին: Թւանշանների գործածութիւնը ամէն դէպքում վնասակար է, թէ ժլատ լինելով և թէ շռայլ՝ նրանց բաշխելու ժամանակ: Երբ ժլատ են լինում, պատահում է այն ինչ որ նկարագրել է պ. Լ. Մանուէլեանցը, իսկ երբ շռայլ՝ թւանշանները լօբի-ջրի պէս անհամ են դառնում և ազդեցութիւնը կորցնում: Այստեղ ակամայից մարդու միտն է գալիս Թէհրանի Դալվազա-Դովլաթի խալֆա Գասպարեանը և իր տւած ոսկեզօծ թղթերից պսակներն ու առատութեամբ բաշխւած նիշերը զանազան «պարոնիկների» և «աղա-մանուկների»… Ափսոս որ պ. Մանուէլեանցը չէ կարող տեսնել Գասպարեանցի դպրոցը և տալ մեզ նրա մասին մի քանի դպրոցական նամակներ էլ: Բայց այդ պարտքը մեր թերթի մի աշխատակիցը անշուշտ մի օր կը կատարի և կը տայ մեր ռուսահայ եղբայրներին մի պատկեր այն Տէր Թօզիկեան դպրոցի, որ օրը-ցերեկով դեռ ապականում է Թէհրանի հայ ապագայ սերունդը: Պ. Լ. Մանուէլեանցի «նամակները» մեծ հաճոյքով և հետաքրքրութեամբ են կարդացվում. մեր դպրոցների մասին գրելիքներ շատ և շատ կան, յոյս ունինք որ կը շարունակէն դեռ այդպիսի նամակներ: Նամակներից յետոյ «Մուրճը» տալիս է Յ. Յակովբեանի մի շատ յաջողւած «Պատկերներ» բանաստեղծութիւն, թշւառ թիւրքահայի կեանքից:

Որպէս գիտական և քաղաքատնտեսական, շատ լաւ են գրւած (exposé) «Ժառանգականութիւն»և «Խոշոր ինդուստրիայի զարգացումը», իսկ որպէս գրախօսութիւն, կայ Գալուստ Տ. Մկրտչեանի «Գարագաշեանի քննական հայ. պատմութեան» քննադատութեան մի կտորը:

Ամենից աւելի լաւ կազմւած և լուրջ ուշադրութեան արժանի յօդւածն է ժամանակակից տեսութիւնը Հայկական խնդրի նորագոյն զարգացման» առթիւ: Այդ յօդւածը չորրորդն է և ոչ մի հայ լրագրում այնքան ամփոփ, այնքան խղճմտանքօրէն և ուշադրութեամբ չէ գրւած հայկական հարցի մասին, որքան «Մուրճի» այդ չորս յօդւածներում, որոնք միասին առած՝ կազմում են ապագայ հայ պատմութեան համար շատ լաւ մշակւած նիւթ: Ցանկալի էր շատ, որ գտնուէր մի հրատարակիչ և որ առաջարկէ Մուրճի խմբագրութեան, առանձին գրքոյկով ի մի ամփոփել այդ չորս և հետևորդ յօդւածներն՝ հայկական հարցի առթիւ:

Առ հասարակ «Մուրճը» այժմ ներկայանում է որպէս մի լուրջ ամսագիր, արժանի քաջալերութեան և ուշադրութեան. մնում է նրան միայն՝ քիչ աւելի ազատ պահել իրեն զանազան աններդաշնակ և անհամ բանաստեղծութիւններից, որպիսին է «Հրաժեշտ» կտորը. չէ որ—խոստովանել է պէտք—այդ կտորի մէջ ո՛չ մի մուզիկա, ո՛չ մի նրբութիւն չը կայ և դեռ կան տողեր էլ, որոնք Լրջանկայիշատակ«Արմենիայի» բանաստեղծութիւններն են յիշեցնում:

Այ օրինակ:

Երբ դուք լաց լինէք,—ո՛ ես կը լինեմ այն.

Արցունքի միջով իմ վիշտը տեսէք..,

Վ. Փ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Սսոյ հանգուցեալ կաթուղիկոսին էլ են կողոպտել: Կ. Պօլսի թերթերը հաղորդում են որ նրա մեռնելուց յետոյ գտել են որ 400 ոսկի անյայտացել է: Գողացւած է նաև կաթուղիկոսարանի ունեցածը: Ամբողջ վանքի 23 տարւայ խնայողութեան արդիւնքը կողոպտւել է վեհարանի ծառաների ձեռքով:

—Լրագիրները հաղորդում են որ Սերբիայի, Յունաստանի և Ռումանիայի մէջ խորհրդակցութիւններ են լինում գործողութեան ընդհանուր ծրագիրներ սահմանելու, եթէ բուլգարական և մակեդոնական խնդիրների համար նոր յուզումներ լինեն:

—Հունգարական թերթերը հաղորդում են որ գործերի դրութիւնը այնպէս փոխւելու է շուտով Բուլգարիայում, որ իշխան Ֆերդինանդը ստիպւելու է հրաժարւել գահից:

—Խոլերան Փոքր Ասիայումն է: Հալեբում մեռել են 7 օրւայ մէջ 26 հոգի, Դիարբէքիրի վիլայէթում 28 հոգի, Ադանայում 75 հոգի և այլն:

—Կրէտէ կղզում նոր անկարգութիւններ են տեղի ունեցել քրիստոնեաների և թիւրքերի մէջ, մի աղջիկ փախցնելու առթիւ: Յուզումն ու կռիւները անընդհատ շարունակվում են կղզու ամէն կողմերում:

—Իրլանդիայում լուրջ պատրաստութիւններ են տեսնվում կռւելու Անգլիայի դէմ: Օգոստ. 5 ի մի մեծ միտինգի մէջ որոշւել է գաղտնի ընկերութիւններ կազմել: Միտինգը բաղկացած էր 5000 հոգուց:

—Յ'օզուտ Հայկական հարցի, Չեստեբի մեծ միտինգում, ծերունի Գլադստոնը մի շատ ոգևորւած ճառ է խօսել: Կովկասեան բոլոր թերթերը տպում են այդ ճառը: Մեզնից անկախ պատճառով «Շաւիղը» անկարող է տպել նոյնպէս:

Թ.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌԷՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Լոնդոն. 28 օգոստոս (ն, տ.) Հոնկգոնկի Ռէյտերի թղթակիցը հեռագրում է որ միսիօնարների սպանման գործի առիթով կազմւած յանձնախումբը բաւականացուցիչ առաջդիմութիւն է անում: Շատ ամբաստանւածներ կան:

Կ. Պօլիս. 28 օգոս. Բ. Դուռը հեռագրել է Փարիզի և Պետերբուրգի իր դեսպաններին որ յայտնեն իր գանգատը կառավարութիւններին, Անգլիոյ բռնած կծու դիրքի համար, հայկական խնդրի առթիւ, որը սաստիկ կարող է վնասել Սուլթանի ազդեցութիւնը: Բ. Դուռը խնդրում է Ֆրանսիային և Ռուսիային պահանջելու Անգլիայից որ նա չափաւորէ իր բռնած դիրքը: Պատասխանը անբաւարար է:

Լոնդոն. 31 օգոս. Լորդերի ժողովում, անցեալ երեկոյ, Սալիսբիւրին պատասխանեց մի հարցասինդումի Ֆրանսիայի և Անգլիոյ մէջ տեղի ունեցող բանակցութեան մասին Միկոնգ գետի երկու ափերի առթիւ, յայտնեց որ առհասարակ չինացւոց և ֆրանսացոց կողմից ձգտումներ են լինում ստնակոխ անելու անգլիական շահերը, բայց ինքը յոյս ունի որ այդ հարցը բարեկամաբար վերջացնել կարելի է:— Չինաստանը համաձայնւել է վճարել 4 միլիոն ֆրանկ իբր տուգանք ֆրանսիական միսիօնարների հասցրած վնասների համար:

Լոնդոն. 31 օգոս. Շանխայից հասնող մի հեռագիր հաղորդում է կայսերական մի հրովարտակի մասին, որով Լի-հունգ-Չանկը հաստատվում է նախարարապետութեան և փոխարքայութեան մէջ:

Լոնդոն. 2 Սեպտ. Գործերի դրութիւնը Կ. Պօլսում շատ կրիտիկական է, Սուլթանի երերուն ընթացքի առթիւ հայկական հարցում: Հէնց դրա համար էլ մեծ-վէզիրի հրաժարւելը մօտալուտ է համարվում:

Բէրլին. 3 սեպտ. Կայսր Վիլհելմը Սեդանի կուի տարեդարձի առթիւ տրւած խնջոյքի ժամանակ խօսել սոցիալիստների մասին, հաչակեց նրանց որպէս անուղղայ խռովարարներ, որովհետև կամենում են խաղտել կայսերութեան հիմքը. նա հրաւէր կարդաց բանակին, միշտ դիմադրելու նրանց.

„ՇԱՒԻՂԻ“ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ամերիկա. Լինն-Մասս. Դ. Մարգարեան. Ստացանք մէկ դոլլարը. կուղարկենք կէս տարւանը. իսկ յունվարից սկսած, եթէ ուզենաք բաժանորդ գրւել, ամբողջ տարւայ համար պիտի ուղարկէք 2 դոլլար: Շնորհակալ ենք ձեր բարեմաղթութիւնների համար:

Դավրէժ. Շահբազեան. Դիմեցէք այտեղի Հնդկա-Եւրոպական հեռագրատուն. մենք ստանում ենք նոյն ընկերութեան այստեղի ճիւղից:

Արտօնատէր հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԷՆԶԷԼԻԻ նորաբաց մի դասեան դպրոցի համար, հարկաւոր է

ՈՒՍՈՒՑԻՉ

Հայերէն, Ռուսերէն լեզուների և միւս առարկաների համար: Շաբաթական 24 դասով, 300 րուբլի ռոճիկ, սենեակ (դպրոցում) վառելիք և ծառայ; Դիմել Էնզէլիի դպրոցի հոգաբարձութեան, ուղարկելով ուսուցչական վկայականի պատճէնը: 1—3

GRAND HOTEL
ԳՐԱՆԴ ՕՏԷԼ
Հիւրանոց
ԱԼԱ-ԷԴ-ԴՕՎԼԷՅԻ ՓՈՂՈՑՈՒՄ
ԹԷՀՐԱՆ
1—50

ՀԱՅԿԱԶԵԱՆ երկսեռ վարժարանի տղայոց դպրոցը կը բացւի սեպտ. 1-ին, իսկ ՕՐԻՈՐԴԱՑ դպրոցը վարժուհի հասնելու երկրորդ օրը:

Ուստի կը ծանուցւի Թէհրանի հայ հասարակութեան որ մինչև սեպտեմբերի 1-ը կարող են իրենց տղայոց և օրիորդաց անուններն արձանագրել տալ ս. Գէորգ եկեղեցու քահանայի սենեակում:

Նախագահ Հոգաբարձութեան՝
Սահակ Ծ. վ. Այվազեան